

## ԳԱՐԵԳԻՆ ԵՊ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆԻ ԵՐԿԵՐԸ

ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՑՄԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ<sup>\*)</sup>

(Մահման խանամեակի առիրով)

Ա. Շահնազարեանի

Ֆրանսոսիական մեծ յեղափոխութիւնը կողմնակի ճանապարհով ունեցաւ իր բարերար ազգեցութիւնը նաև Տաճկանայ գրականութեան վրայ Երկար դարեր գտնուելով մի խաւար մթնութիւնում, որ ստեղծել էր տաճկի կառավարութիւնն իր հպատակների համար, հայ ժողովուրդը դեգիրում էր այդ խաւարի մէջ, կրելով մի այնպիսի չարքաշ կեանք, որպիսին յատուկ է միայն ասիական քրիստոնեայ ազգերին, մահմետական գերիշխանութեան ներքոյ. հայ ժողովուրդն ոչ միջոց, ոչ ժամանակ և ոչ էլ յարմարութիւն ունեցաւ իր մտաւոր ոյժերը զարգացնելու, իր ներքին հոգեկան կեանքն ասպարեզ բերելու ուր չկայ կեանքի, գոյքի ապահովութիւն, ուր մարդուս մտաւոր գործունէութիւնը միշտ կաշկանդուած է մուռմ ամուր շղթաներով, այնտեղ խօսք չէ կարող լինել գրական գործունէութեան մասին, այնտեղ մարդիկ կարող են հաղար ու մի տանշանքներ կրելով միմիայն իրենց օրուայ ապրուատի մասին մտածել. այսպիսի ժողովուրդը չէ կարող գրականութիւն առաջ բերել, չէ կարող մտաւոր գործունէութեան անձնատուր լինել. Ահա մի այսպիսի անմիտթար վիճակի մէջ էր գտնուում հայ ժողովուրդն անցեալ դարի սկըզբներին, երբ Փրասիական մեծ յեղափոխութիւնը, ինչպէս եւրոպական ժողովուրդների, այնպէս էլ տաճկաստանի հպատակների կաշկանդուած շղթաները ջանաց կտրատել և նպաստեց նոցամտաւոր գործունէութեան:

Տաճկանայ ժողովուրդն իւր մտաւոր վերածնութեամբ մեծաւ մասամբ պարտական է Փրասիական այդ միջ շարժման,

\*) Կարգացուած է Հայոց Ազգագրական ընկ. Սբուանձտեանի յիշատակին նուիրուած հրապարակային նիստում:

որը խթան եղաւ մտքի ազատ արտայայտութեան, որը սովորեց-  
րեց սէր դէպի հայրենիքը, սէր դէպի ժողովուրդը, որը քա-  
րոզեց եղբայրասիրութիւն, կռիւ յայտարարեց մտքի բռնակալ-  
ներին։ Դեռ 1848 թուականից առաջ հայ երիտասարդները գը-  
նուում էին Փարիզ՝ բարձրագոյն ուսուում ստանալու, այդ ժամա-  
նակ Փարիզում էր գտնուում նաև Մուլատեան վարժարանը, որը  
ծառայում էր իբրև կենդրոն հայ ուսուումնածարաւ երիտա-  
սարդների և որի շուրջն էին ժողովում Տաճկահայ մտա-  
ւորականները. այստեղ նոքա ձեռք էին բերում այն ամենը, ինչ  
որ անհրաժեշտ էր հայրենիքում գործադրելու, վերադառնալով  
Կ. Պօլիս նոքա եռանդուն զործունէութիւն սկսեցին թէ զրական  
և թէ հասարակական ասպարէզներում. գումարում էին ժողով-  
ներ, հիմում էին զանազան դպրոցական և բարեգործական հաս-  
տառութիւններ՝ գաւառացի հայ ժողովուրդին խաւարից հանե-  
լու և նոցա դէպի լոյսն առաջնորդելու. Այդ գործիչների առաջ-  
նորդող գաղափարն էր հայրենասիրութիւն և ժողովը դաշտականիրու-  
թիւն՝ այս բառի ամենաընդարձակ նշանակութեամբ. սոքա նա-  
խապատրաստեցին և ապա կազմեցին Տաճկահայի ազգային  
սահմանադրութիւնը, որը նոր խթան պիտի լինէր հայի ինքնու-  
րոյն գործունէութեան. Այլ կերպ չէր էլ կարող լինէլ. վերա-  
դարձած ազատ երկրից, մնուած ազատ ժողովրդի մտքի արտա-  
դրութեամբ՝ հայրենիքում նոքա տեսան մի չարտասանջ ժողո-  
վուրդ, որին օր առաջ հարկաւոր էր օգնութեան հասնել՝ կո-  
րսատից ազատելու համար. հարկաւոր էր ժողովրդին ինքնազի-  
տակցութեան բերել, անհրաժեշտ էր ցոյց տալ, թէ ովէ է նա և  
թնչ անցեալ է ունեցել. Ահա այս ուղղութեամբ առաջնորդուե-  
լով Ֆրանսիայից վերադարձած հայ երիտասարդները մրանսիայի  
նշանաւոր հեղինակների երկերի թարգմանութեանց հետ միաժամ-  
անակ՝ սկսում են քրքրել նաև հայի պատմական անցեալը, այն-  
տեղից նիւթ վերցնելով՝ զրական նոր երկեր են ստեղծում,  
պատմական նշանաւոր հերոսները նորից ասպարէզ են իշնում։  
Թէև այդ շրջանում գործիչները չկարողացան աչքի ընկնող եր-  
կեր տալ (որովհետեւ կեղծ կլասիկ ուղղութիւնը կաշկանդել էր  
նոցա), բայց ժամանակի ոգին այնպէս էր, որ Տաճկահայ ժողո-  
վուրդն ոգևորուում էր դոցա պատմական ընոյթ ունեցող գրուած-  
ներով. այդ իսկ պատճառով պատմական վէտերի և ողբերգու-  
թեանց թիւն օր աւուր բազմանում էր։

Տաճկահայ այս գործիչներին 40—50 թուականներին մայր  
երկրում հետեւեցին շատերը, որոնք թէև արտասահման չէին զը-  
նացել, բայց հայրենիքում ձեռք էին բերել որոշ պատրաստու-

թիւն՝ նոյն ուղղութեամբ գործելու. սոքա ևս ոգնորուած հայի պատմական անցեալով և հայրենիքի նուիրական վայրերով տապարէզ իջան իրանց կարողութեան չափով ժողովուրդի միաբը զարթեցնելու, նոցա առաջնորդ հանդիսանալու. Մայր երկում այդ հայրենասէր գործիչներիցն էր նաև Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանը:

Ազգային վէպերի, աւանդութեանց և յիշատակների այդ զգայուն երգիչը ծնուել է 1840 թ. դեկ. 12-ին Վան քաղաքի Այգեստանեաց Սանդենց թաղ կոչուած քաղաքամասում<sup>\*)</sup>). այս տեղ մանուկ հասակից այդ վառվուն և հարուստ երեսկայութեամբ ու զգացումով լի մանուկն աշակերտեց և մամիկներուն ու խալիքորներուն, լսեց նոցա պատմած հերթաթները, առասպելները, երգերն ու աւանդութիւնները. ինքն էլ շարունակեց նոյնը պատմէլ իւր հասակակիցներին: Գեղեցիկ էր Սանդենց թաղ կոչուած քաղաքամասը իւր բնական դիրքով, ծառերով, ջրերով ու ծաղիկներով և այս ամենը խոր ազգեցութիւն են թողնում Սրուանձտեանի վրայ: 10—12 տարեկան հասակում նա սովորում է կարգալ սազմոս և ժամագիրը, ապա աշակերտում է կօշկակարի, արինեստը նորան չէ գրաւում և նա շարունակում է գարձեալ կարգալ սովորել Թօօզ կոչուած Մահտեսի Օհանէսի և Սահառունի Աւելտիսի մօտ. բայց այդ չափը բաւականութիւն չէ տալիս ուսումնածարաւ երիտասարդին և նա մտածում է իւր երկու ընկերների նշան Շիրուանեանի և Տիգրան Ամիրջանեանի հետ ուղղելորուել Վարագ: 1857 թ. Վարագայ վանքն իւր դպրոցով և այլ հիմնարկութիւններով երանական մի վայր էր դարձել հայ երիտասարդների համար. Խրիմեան Հայրիկը, բնական ձիրքերով օժտուած այդ հայրենասէր և բանաստեղծ վարդապետը յղացել էր մի խիզախ միաբ—ասիական խաւար մթնոլորատում հիմնել լուսոյ տաճար, ժողովներ հայ մանուկներ և նոցա կրթել հայրենասիրական ոգով, զարգացնել նոցա մէջ մէր գէպի հայ տառապեալ ժողովուրդը, սէր գէպի հայ անցեալը. մի զարմանալի տոկունութեամբ նա հիմնել էր Վարագում տպարան, հրատարակում էր «Արծուի Վասպուրական» թերթը, բերել էր տուել գիւղատնեսական գործիքներ, կազմել թանգարան, շինել թատրոնական սրահ և այսպիսի բեղմաւոր գործունէութեամբ դէպի Վարագ գրաւել Տաճկահայի միաբը: Բախտաւոր էր համարւում այն մանուկը, ով կը մտնէր Վարագայ դպրոցը: Գ. Սրուանձտեանը յաջողութեամբ մանում է այդ գլուխը, ուր, իւր բնական

<sup>\*)</sup> Կենուագրական այս տեղեկութիւնները բաղում ենք Շերենցի իշխութիւններից. («Ազգ. Հանդէս» IX գիր 1912 թ. էջ 272—281).

ձիբքի շնորհիւ, գրաւում է Խրիմեանի ուշաղրութիւնը, դառնում է նրա օգնական և կարճ ժամանակից յետոյ նաև «Արծուի Վասպուրականի» թերթի փոխ-խմբագիրը։ Այս թերթի մէջ նա ըսկում է տպագրել նախ իւր աշակերտական ժամանակի գրաքար լիզուով գրած ոտանաւորները, ապա Վանայ պառաւանց աղօթքն և «կեանքը ծովու կը նմանի» խորհրդածութիւնը։ միենոյն ժամանակ հետևելով իւր մեծ ուսուցչին՝ նորա ուղղութեամբ սկսում է տպագրել գտնազան հայրենասիրական յօդուածներ, նիւթ վերցնելով Վ-րդ դարու մեր պատմական նշանաւոր դէպթերից ու անձնաւորութիւններից։

Միաժամանակ Սրուանձտեանն ուսուցիչ էր Վարագայ զըպրոցում։ Այս շրջանում նա շարունակում է բաւական թուով յօդուածներ տպագրել կ. Պոլսի «Մանզումիէ Էֆքեար», «Մասիս» Թիֆլիսի «Մեղում», «Կոունկ», Զմիւռնիայի «Արևելեան Մամուլ» թերթերում մեծամասամբ «Վարդ» ստորագրութեամբ։ այս թըդթակցութիւնների մէջ նա հայ ժողովրդի գրութիւնը պատկերացնելուց յետոյ, տալիս էր նաև ժող. ստեղծագործութեան նմուշներ։ 1860 թ. Խրիմեանի հետ Դ. Սրուանձտեանն ևս սկսեց շրջել Հայաստանի գաւառները, հասաւ Թիֆլիս, Էջմիածին և վերադառնալով Տարօն՝ ժողոված դրամներով զպրոց բաց արին ս. Կարապետի վանքում և հրատարակեցին «Արծուի Տարօնոյ» թերթը։ Միաժամանակ այստեղ է հաստատում Գարեգին սարկաւագ Սրուանձտեան՝ իրեն ուսուցիչ, քարողիչ և խմբագիր, որտեղից և նորա գործունէութեան համբաւը արածուում է ոչ միայն շրջակայքում, այլ նաև հեռուն և հասնում մինչև Թիֆլիս։ 1864 թ. վարդապետ ձեռնադրուելով նա վերադառնում է իւր սիրելի Վանը։ այստեղ իւր քարոզներով հմայում է ունկընդիրներին, նա խօսում էր զգացուած, ոգևորում բոլորին, Վ-րդ դարու մեր հերոսները նորա քարոզների համար անսպաս աղրիւր էին։ 1868 թ. նշանակւում է Կարնոյ դպրոցների տեսուչ, ուր իսկապէս ցոյց է տալիս իւր մանկավարժական հմտութիւնն ու ու շնորհը և թէ այդ տեսակէտից նա որբան բարձր էր կանգնած ժամանակակից ուսուցիչներից։ Ապա առաջնորդական կամ քարոզչական պաշտօնով նա տեղափոխւում է կ. Պոլիս, Տիգրանակերտ, Ակն. 1878 թ. Ռուս-Տաճկական պատերազմի վերջը մի երկար ուղևորութիւն է կատարում Հայաստանի խորքերում՝ հայ ժողովրդի վիճակի մասին տեղեկութիւններ հաւաքելու և ն. Վարժապետեանին ներկայացնելու։ նորից դառնում է Վան՝ իրեն օգնական Խրիմեան Հայրիկի։ 1888 թ. եպիսկոպոս ձեռնա-

դրուելով՝ Տրապիզոնի առաջնորդ է նշանակւում և ի վերջոյ Կ. Պալսի Բերայի ու Երբորդութեան եկեղեցին է հրաւիրւում իրքն քարոզիչ, ուր 1892 թ. նոյեմբեր 17-ին նա մեռնում է և թաղւում Շեշլիի գերեզմանատանը:

Գ. Սրուանձանեանը շատ վաղ իջաւ գրական ասպարեզ, բայց նորա գրական առաջի երկերը զուրկ են ինքնուրոյնութիւնից՝ ի բաց առեալ ժողովրդական նիւթերը. նա սկզբում հետևում էր Խրիմնանին, ապա գարձաւ կեղծ կլասիկ ուղղութեան երկրագու և երկու պատմական երկ գրեց՝ «Ռզբերգութիւն մեծին Մահակայ Պարթիկ և անկումն Արտաշրի Արշակունոյց», որը յօրինել էր իւր ընկերների հետ և որը խաղացուել է թէ Վարդում և թէ Վանում, իսկ միւսն է «Շուշանն Շաւարշանայց»: Այս երկու գրուածքն որոշ դիտումով է շարադրուած, հեղինակի նպատակն է եղել մեր կողմից ողբալ Արշակունեաց հարստութեան անկումը և սէր ու միաբանութիւն բարոզել հայ ժողովրդին, միւս կողմից ցոյց տալ բրիտանէութեան յաղթանակը և Վարդանի օրինակով քաջալիքը հայ երիտասարդներին: Այս գրուածքները զուրկ են որևէ գրական արժեքից, ուստի կարենոր չենք համարում առանձնապէս կանգ առնել դոցա վրայ և մանրամասն ըննութեան ենթարկել: Բայց Սրուանձտեանը շուտով թողնելով այդ ուղղութիւնը, հանդէս եկաւ գրական մի այլ առարեզում, ուր նա կարողացաւ ցոյց տալ իւր ընածին տաղանգը և ուր, ըստ արժանուոյն, նա գնահատուեց ժամանակակիցներից, իրքն միակը, որը այդ միջոցներին իրան նուիրեց ժողովրդական ստեղծագործութեանց ժողովելուն: Գ. Սրուանձտեանից առաջ փորձեր են եղել հայ ժողովրդական բանահիւսութեան մնացորդները հաւաքելու, բայց այդ բոլորը կը ել են մասնաւոր ընոյթ, պատահական ձևով այս կամ այն գրագէտը ճանապարհորդելով հայկական գաւառները լսել և գրի է անցրել այն, ինչ որ նրան գրաւել կամ հետաքրքիր է թուացել. իսկապէս Գ. Սրուանձտեանին կարելի է այս տեսակէտից առաջինը համարել. նու ինքը սիրելով ժողովրդական ստեղծագործութիւնը, աւելի ևս հայ ժողովրդին, մեծ թափով նուիրուեց այդ գործին, այս ու այն անկիւնից հանեց ու լոյս ընծայեց առաջին անգամ հայ դիւցազներդութիւնը, առասպելները, երգերը, հեքիաթները և աւանդութիւնները:

Ինչպէս կենսագրութեան մէջ նկատել էինք, Գ. Սրուանձտեանը գել շատ փոքր հասակում առիթ էր ունացել միշտ լսելու սանդի շուրջը ժողովուած ժամամիկներու ու «Ծխալիվորներու» պատմածներն եօթնգլիսեան դէվերի, վիշապների, ջան-

բոլագների, խուրն խրեղէնների հեքիաթները. այս հանգամանքն ունեցել է խիստ ուժեղ աղղեցութիւն նորա մատաղ հոգու վերայ և ապագայ ամբողջ կեանքում նորա մտքի առաջնորդն է եղել Սարկաւագ և ապա վարդապետ դառնալով և շրջելով աւանդութիւններով, երգերով ու վէպերով լի հայկական գաւառները, մօտիկ շփուելով բուն ժողովրդի հետ՝ նորա ուշն ու միտքը գրաւում է հայ ժող. ստեղծագործութիւնը. նա այդ բոլորի մէջ նկատում է անցեալ կեանքի յիշատակներն, տեսնում է մինչև իսկ մեր աւանդական և պատմական հերոսներին հոգի ու շունչ առած. անհուն սիրով նա սկսում է սիրել հայրեննեաց աւերակը, վանքը, գիւղը, առուակը, ծաղիկները, ժայռը. և ահա այս բոլորը կենդանի կերպով պատկերանում են նորան՝ իրանց հետ կապուած աւանդութիւններով ու վէպերով և չեն ելնում նրա մտքից. այսուհետև նա գրիչ է վերցնում շունչ ու կենդանութիւն տարու մինչ այդ ժամանակ անշունչ մնացած առարկաններին. նա դառնում է մի տեսակ երգիչ հայ ժողովրդական ստեղծագործութեանց. Դժբախտաբար այս ուղղութեամբ զրուածներից ընաւ չէ հրեսում, թէ Գ. Սրուանձտեան սկսելով ժողովել բանաւոր երգերը, ունեցել է որոշ ծրագիր կամ առաջնորդուել է որևէ ուղղութեամբ. մինչև իսկ սկզբում առանձին մեծ կարենորութիւն չի էլ տուել այդ նիւթերին, առաջին երախայրիքը (Գրոց ու Բրոցը) նոյն իսկ երկիւղով և ուրիշի թելազրութեամբ է ՚ի լոյս ընծայել, կասկած կրելով. թէ քննազամները կարող են նորան դատապարտել այսպիսի նիւթեր հրատարակելու համար. Բուն ժողովրդական նիւթերը նա սկզբում հրատարակեց պարբերական թերթերում. բայց յետոյ, երբ բանաօէրները նկատեցին մեր ժողովրդական այդ հարուստ ստեղծագործութիւնը՝ նամակներով խրախուսեցին և նպաստեցին՝ որ նա լուրջ ուշադրութիւն գարձնէ և առանձին գրքերով հրատարակէ այդ նիւթերը. Գ. Խալաթեանը մինչև իսկ ծրագիր կազմեց և ուղարկից Գ. Սրուանձտեանին, որ նա նիւթեր ժողովելիս՝ առաջնորդուի այդ ծրագրով:

(Կը շարունակուի)